ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 111-Լ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ոստիկանության ծառայողների առաքինության ստուգման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

«30» դեկտեմբերի 2025թ.
ք.Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի
«30» դեկտեմբերի 2025թ.
N 111-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) ծառայողների առաքինության ստուգման (այսուհետ՝ առաքինության ստուգում) իրականացման ընթացակարգն ու պայմանները:

2. Առաքինության ստուգումն իրականացվում է սույն կարգին և «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքին համապատասխան:

3. Առաքինության ստուգումն իրականացվում է օրինականության, մարդասիրության, անձի պատիվն ու արժանապատվությունը հարգելու, արդարության, իրավապահ ոլորտում պետական շահերի ապահովման, ինչպես նաև ոստիկանության ծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սկզբունքների հիման վրա:

4. Առաքինության ստուգումն իրականացվում է նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն ստորաբաժանման (այսուհետ՝ իրավասու ստորաբաժանում) կողմից: Անհրաժեշտության դեպքում առանձին հարցերի ուսումնասիրության համար Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ նախարար) համաձայնությամբ առաքինության ստուգմանը կարող են ներգրավվել նախարարության և ենթակա մարմինների այլ ստորաբաժանումների ծառայողներ:

5. Առաքինության ստուգումը սույն կարգով սահմանված դեպքերում և ընթացակարգով նախատեսված միջոցառումների իրականացումն է, այդ թվում՝ պրովոկացիայի եղանակներով, ոստիկանության ծառայողի բարոյական, գործնական որակների և հատկանիշների վերաբերյալ տեղեկություններ ստանալու, ուսումնասիրելու, վերլուծելու ու ստուգելու նպատակով:

6. Առաքինության ստուգումն իրականացվում է ոստիկանության ծառայողի առաքինի և բարեվարք վարքագծի ապահովման, ծառայողական կարգապահության ամրապնդման, ոստիկանության ծառայողի կողմից կատարված խախտման ժամանակին բացահայտման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի ու պայմանների ապահովման, խախտումների կանխարգելման, դրանց պատճառների ու նպաստող պայմանների վերացման, հանրային ծառայության, այդ թվում՝ ոստիկանության գործունեության նկատմամբ հանրության վստահության ամրապնդման, կոռուպցիայի նկատմամբ անհանդուրժողականության ամրապնդման նպատակով:

7. Ոստիկանության ծառայողի առաքինի և բարեվարք վարքագիծը ներառում, բայց չի սահմանափակվում, ծառայողական պարտականությունները կատարելիս և մասնավոր կյանքում այնպիսի ապրելակերպ և գործունեություն, որոնք համահունչ են ոստիկանության ծառայողի բարոյական որակներին, հանրային ծառայողների վարքագծի սկզբունքներին, ոստիկանության ծառայողի վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախման կանոններին:

8. Առաքինության ստուգման նյութերը չեն կարող հիմք հանդիսանալ ոստիկանության ծառայողին քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելու համար: Առաքինության ստուգման ընթացքում այլ փաստերով հանցագործության կամ վարչական իրավախախտման հատկանիշներ հայտնաբերելու դեպքում ստուգումն իրականացնող ծառայողն իրավասու ստորաբաժանման պետի միջոցով հանցագործության կամ վարչական իրավախախտման հատկանիշների մասին զեկուցագիր է ներկայացնում նախարարին:

9. Առաքինության ստուգման բացասական արդյունքները կարող են հիմք հանդիսանալ ստուգման ենթարկվող ոստիկանության ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար: Ստուգման ընթացքում ոստիկանության այլ ծառայողի կողմից ոստիկանության ծառայողի վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ շահերի բախման կանոնների խախտման կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ ծառայողական լիազորություններն անցնելու կամ կարգապահական խախտման հատկանիշներ հայտնաբերելու դեպքում առաքինության ստուգումն իրականացնող ծառայողը զեկուցագիր է ներկայացնում իրավասու ստորաբաժանման պետին:

10. Առաքինության ստուգումն իրականացվում է անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության պահանջների պահպանմամբ: Առաքինության ստուգման ընթացքում ստուգումն իրականացնող ծառայողի կողմից պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին հասանելիությունը և դրանց տնօրինումն իրականացվում է «Պետական գաղտնիքի մասին» օրենքի և դրանից բխող ենթաօրենսդրական ակտերի պահանջներին համապատասխան:

2. ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼԸ

11. Ոստիկանության ծառայողի նկատմամբ առաքինության ստուգում նշանակելու հիմք են ոստիկանության ծառայողի կողմից վարքագծի կանոնների կամ անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների կամ շահերի բախման կանոնների խախտման կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ ծառայողական լիազորություններն անցնելու կամ կարգապահական խախտման առերևույթ հատկանիշներ պարունակող վարքագծի կամ նման ենթադրյալ խախտման առնչությամբ ռիսկերի առկայության մասին վկայող այն տեղեկությունները, որոնք կարող են տեղ գտնել՝

1) իրավաբանական և ֆիզիկական անձանց դիմումներում, նամակներում, գրավոր կամ բանավոր այլ հաղորդումներում, այդ թվում՝ հեռախոսային կապի,

համացանցային սոցիալական հարթակների, էլեկտրոնային փոստի և կապի այլ միջոցներով ստացված.

2) զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում.

3) ոստիկանության ծառայողների կամ այլ աշխատակիցների գրավոր կամ բանավոր հաղորդումներում (դիմում, զեկուցագիր, հայտարարություն և այլն):

12. Ոստիկանության ծառայողի նկատմամբ առաքինության ստուգում նշանակում է նախարարը՝ սույն կարգի 11-րդ կետով սահմանված հիմքերի առնչությամբ իրավասու ստորաբաժանման կողմից կազմված զեկուցագրի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ:

13. Առաքինության ստուգումը նշանակվում է հանձնարարականով, որում նշվում են առաքինության ստուգման նշանակման համար հիմք կամ առիթ հանդիսացած հանգամանքները և տեղեկությունները, ժամկետները, ստուգման ընթացքում պարզման ենթակա հանգամանքները և ստուգում իրականացնող ծառայողների տվյալները:

3. ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԸ

14. Առաքինության ստուգման ընթացքում ստուգում իրականացնող ծառայողը լիազորված է՝

1) գրավոր բացատրություններ վերցնել կամ բանավոր հարցումներ կատարել ոստիկանության այն ծառայողներից, որոնք կարող են առաքինության ստուգման ենթակա հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվություն տալ.

2) առաքինության ստուգման ենթակա հանգամանքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկության տիրապետող ֆիզիկական անձանցից ստանալ բանավոր պարզաբանումներ կամ նրանց առաջարկել ներկայացնել գրավոր բացատրություններ.

3) ուսումնասիրել առաքինության ստուգմանը վերաբերելի, պարզաբանման ենթակա հանգամանքներին առնչվող քրեական, քաղաքացիական, կարգապահական կամ վարչական վարույթի նյութեր և նախարարության տնօրինության տակ գտնվող այլ փաստաթղթեր, անհրաժեշտության դեպքում դրանց կրկնօրինակները կցել առաքինության ստուգման նյութերին.

4) առաքինության ստուգման առնչությամբ միջնորդություն ներկայացնել նախարարին կամ իրավասու ստորաբաժանման ղեկավարին՝ համապատասխան իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ մարմիններին ու կազմակերպություններին հարցումներ կատարելու վերաբերյալ, նրանցից ստանալ փաստաթղթերի կրկնօրինակներ.

5) կատարել ոստիկանության ծառայողի կամ տեղանքի, շինության, տրանսպորտային միջոցի, առարկայի, փաստաթղթի կամ էլեկտրոնային կամ մագնիսական կրիչի բովանդակության զննություն.

6) հասանելիություն ունենալ և օգտվել նախարարությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններից.

7) իրավասու անձանց (ոստիկանության համապատասխան ծառայողի կամ նրա ստորաբաժանման ղեկավարի) ներկայությամբ հասանելիություն ունենալ ոստիկանության ծառայողական շինություններին, ոստիկանության ծառայողների աշխատավայրերին, ծառայողական համակարգիչներին, ծառայողական

հեռախոսներին, տեղեկատվության ծառայողական կրիչներին, մետաղյա պահարաններին, այլ պահոցներին, փաստաթղթերին և նյութերին.

8) առաքինության ստուգման ընթացքում իրականացնել պարզաբանման ենթակա հանգամանքների ստուգում պրովոկացիայի եղանակներով՝ անհրաժեշտության դեպքում ներգրավելով ոստիկանության այլ ծառայողների և քաղաքացիների (վերջիններիս համաձայնությամբ).

9) առաքինության ստուգման խնդիրները լուծելու նպատակով կիրառել աուդիո, ֆոտո, վիդեո ամրագրման և այլ հատուկ միջոցներ:

15. Առաքինության ստուգում իրականացնող ծառայողը պարտավոր է ստուգման ընթացքում կատարված գործողություններին և դրանց արդյունքներին տալ համապատասխան փաստաթղթային ձևակերպում՝ կազմելով արձանագրություններ, տեղեկանքներ կամ զեկուցագրեր:

16. Պրովոկացիայի եղանակներով առաքինության ստուգումը վերահսկողական և գնահատողական մեխանիզմ է, որը կիրառվում է պարզելու համար ծառայողի բարեվարքային կայունությունը, ազնվությունը և կոռուպցիոն դիմադրողականությունը, և իրենից ներկայացնում է այնպիսի իրավիճակի արհեստական ստեղծում, որի ընթացքում ծառայողը բախվում է գայթակղիչ, ռիսկային կամ իրավախախտման դրդող առաջարկի, խնդրանքի կամ պայմանների հետ, որոնցում հնարավոր է արձանագրել ոստիկանության ծառայողի ոչ առաքինի և ոչ բարեվարք վարքագիծ:

17. Պրովոկացիայի եղանակներով առաքինության ստուգում թույլատրվում է իրականացնել միայն ստուգում իրականացնող ծառայողի համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ նախարարի թույլտվությամբ: Զեկուցագրում ներկայացվում են պրովոկացիայի իրականացման հիմքերը, անհրաժեշտությունը, մոդելավորվող իրավիճակը և ստուգման ենթակա հանգամանքը:

18. Պրովոկացիայի եղանակներով առաքինության ստուգման ընթացքում թույլատրվում է օգտագործել տարբեր իրեր և փաստաթղթեր, այդ թվում՝ ոստիկանության ծառայողների կողմից հատուկ այդ նպատակով նախապատրաստված, ինչպես նաև ներգրավել մոդելավորման համապատասխան վարքագիծ դրսևորող ոստիկանության այլ ծառայողների և քաղաքացիների:

19. Պրովոկացիայի եղանակներով առաքինության ստուգման յուրաքանչյուր միջոցառման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որում ամրագրվում է մոդելավորվող իրավիճակը, ներգրավված անձինք, օգտագործված միջոցները, առաքինության ստուգման ենթարկվող ոստիկանության ծառայողը դրսևորած վարքագիծը և միջոցառման արդյունքները:

20. Արգելվում է ոստիկանության ծառայողին քրեական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով պրովոկացիայի իրականացումը: Պրովոկացիայի արդյունքները չեն կարող դրվել քրեական կամ վարչական վարույթ նախաձեռնելու հիմքում, չեն կարող որպես ապացույց օգտագործվել քրեական և վարչական վարույթներում:

21. Առաքինության ստուգման տևողությունը մինչև երկու ամիս է՝ ստուգում նշանակելու օրվանից սկսած: Այդ ժամկետն առաքինության ստուգում իրականացնող ծառայողի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա նախարարը կարող է երկարաձգել ևս երկու ամսով:

22. Առաքինության ստուգում իրականացնող ծառայողի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա նախարարը համապատասխան հանձնարարականով կարող է ավարտել առաքինության ստուգման ընթացքը, եթե ի հայտ են եկել դրա կատարումն անհնար դարձնող հանգամանքներ:

23. Առաքինության ստուգման ավարտի համար հիմք հանդիսացած հանգամանքների վերացման դեպքում առաքինության ստուգման ընթացքը կարող է կրկին սկսվել ստուգումն իրականացնող ծառայողի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա՝ նախարարի տված հանձնարարականով:

4. ԱՌԱՔԻՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՎԱՐՏԸ

24. Առաքինության ստուգումն ավարտվում է ստուգումն իրականացնող ծառայողի եզրակացությամբ՝ ուղղված նախարարին: Եզրակացությամբ ներկայացվում են ստուգման ընթացքում կատարված միջոցառումները, դրանց արդյունքները և առաջարկությունները:

25. Առաքինության ստուգման բացասական արդյունքների հիման վրա նշանակվում է ծառայողական քննություն: